



«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
01.01.2015 - 31.12.2015թթ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎԾ)

Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն

«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1996թ.-ին: Ընկերությունը տրամադրում է ոչ կյանքի ապահովագրությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գտնվող գրասենյակում՝ Վ. Սարգսյան 10/110 հասցեում:

Ընկերության բաժնեմասերի 60%-ը պատկանում է Լևոն Քոչարյանին (ՀՀ, ք. Երևան, Ձորափի փողոց 72ա), 40%-ը՝ Վահագն Խաչատրյանին (ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան փողոց, շ 51, բ ն.38):

Ընկերության կորպորատիվ կառավարման գործընթացը ավարտվել է, Ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքները: 31.12.2015թ-ի դրությամբ ընկերությունն ունի 4 անդամից բաղկացած խորհուրդ: Ընկերության կողմից հատակ տարանջատված են ընկերության խորհրդի, գործադիր մարմնի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Ընկերությունում ձևավորված է ներքին աուդիտի ստորաբաժանում:

Ընկերությունը ՀՀ տարածքում ունի 1 մասնաճյուղ:

31.12.2015թ-ի դրությամբ Ընկերությունն ունի 424 ապահովագրական գործակալ և 169 աշխատակից:

Ծանոթագրություն 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

Հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ դրամն է:

Ներկայացված գումարները կլորացված են հազար դրամով:

Ծանոթագրություն 4 . Հաշվապահական հաշվառման գնահատականներ և դատողություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով փոփոխման ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա կամ փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Ծանոթագրություն 5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփում

Ապահովագրության պայմանագրեր

Ապահովագրության Պայմանագիրը պայմանագիր է, ըստ որի՝ կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա:

Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ուժի մեջ մտած ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես եկամուտ:

Վերաապահովագրական ակտիվներ

Ընկերությունը ստանձնած ռիսկերի գծով վնասները ծածկելու նպատակով վերաապահովագրում է իր կողմից ապահովագրած ռիսկերը:

Վերաապահովագրական պայմանագրերից ծագող ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապատասխան ապահովագրության պայմանագրերից ծագած ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի դիմաց:

Վերաապահովագրական պայմանագրերով սահմանված գումարները հաշվառվում են ապահովագրական պայմանագրերի հաշվառման սկզբունքներին համապատասխան: Վերաապահովագրավճարի գծով ծախսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, երբ փոխանցվում է վերաապահովագրված ռիսկը: Փոխանցված վերաապահովագրավճարների չծախսագրված մասը ներառվում է վերաապահովագրական ակտիվներում: Վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ պայմանագրի պայմաններով իրեն հասանելի բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք: Եթե վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է, ապա Ընկերությունը նվազեցնում է դրա հաշվեկշռային արժեքը և արժեզրկումից կորուստը ճանաչում է շահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերվող ոչ նյութական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

Հիմնական միջոցներ

Ընկերության հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձնման ամսաթվից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հետևյալներն են՝

<i>Շենք-շինություններ</i>	<i>20 տարի</i>
<i>տնտեսական գույք</i>	<i>5 տարի</i>
<i>հաշվողական և համակարգչային սարքավորումներ</i>	<i>1 տարի</i>
<i>տրանսպորտային միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>այլ հիմնական միջոցներ</i>	<i>5 տարի</i>
<i>մինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ</i>	<i>1 տարի</i>

Արտարժույթ

Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփռո փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պներկայացվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Հարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը)՝ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույքաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկեր ճանաչվում են կապված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազայի միջև եղած տարբերություններից:

Շահութահարկը ճանաչվում է շահույթ/վնասում:

Հակերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք ճանաչված են՝ ա/ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բ/ ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են սեփական կապիտալում:

Քաժմնատոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ

Ընկերության սեփականատերերին բաշխումներ ճանաչված շահաբաժինների գումարը արտացոլվում է սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքներ

Ընկերության ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրության գծով դեբիտորական պարտքերը, այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ներդրումները, պահովագրության գծով և այլ կրեդիտորական պարտքերը, այլ պարտավորությունները:

Ֆինանսական ակտիվների ճանաչում, չափում

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այլ անձանց:

Ֆինանսական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ՝ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների, որոնք ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գնանշումների հիման վրա:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացվող արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացվող արժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով զեղչված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթ/վնասում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները: Ընկերությունը օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցներ չունի:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներն են, որոնք առաջանում են կրեդիտորներից ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու հետևանքով:

Պարտավորությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ:

Կրեդիտորական պարտքը սկզբնապես ճանաչվում է սկզբնական /հաշվում նշված/ արժեքով:

Կազմակերպությունը պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնի ֆինանսական պարտավորությունը այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Պահուստներ

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:

Պահուստը պետք է ճանաչվի, երբ՝ կազմակերպությունն ունի ներկա պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանավատորեն գնահատել:

Ապահովագրական պահուստները ձևավորվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված իրավական ակտերի, ինչպես նաև ՖՀՄՄ 4-ի պահանջների համաձայն:

Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցներին հատուցումները ներառում են մասնավորապես աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, ինչպիսիք են աշխատավարձը, սոցիալական ապահովության մասհանումը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները, տարեկան արձակուրդները, ինչպես նաև ազատման նպաստները:

Աշխատակիցների հատուցումները ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, երբ աշխատակիցները մատուցում են իրենց ծառայությունը Ընկերությանը:

Ընկերությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների բացակայությունները տարբեր պատճառներով, ինչպիսիք են արձակուրդը, անաշխատունակությունը, հիվանդությունը, ծննդաբերությունը:

Կազմակերպությունը պետք է չափի կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները որպես լրացուցիչ գումար, որը կազմակերպությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե փոփոխություն է կատարվել հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ, կամ հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Ծանոթագրություն 6. Զուտ ապահովագրավճարներ

ՀՀ դրամ

Ապահովագրության դասեր, որոնց գծով հավաքագրվել է ապահովագրավճար	Համախառն ապահովագրավճարներ		Վերաապահովագրողների փոխանցված ապահովագրավճարներ	
	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	53,092	43,820	(74)	
Առողջության ապահովագրություն	1,112,748	1,329,756		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	329,468	348,753	(77,994)	(84,450)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	142,628	168,434	(94,066)	(80,882)
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	230,330	210,475	(148,710)	(167,434)
Ավտո պատասխանատվություն	10,122	4,128	(1,187)	(773)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	90,483	52,102	(15,146)	(20,947)
Ֆինանսական վնասների ապահովագրություն	8,884	6,692	(8,127)	(6,481)
Աջակցության ապահովագրություն	39,147	38,478		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	2,871,422	2,436,329		
Ընդամենը	4,888,324	4,638,967	(345,304)	(360,967)

Ծանոթագրություն 7. Չվաստակած ապահովագրավճարի պահուստի փոփոխություն

Ապահովագրության դասեր	Համախառն փոփոխություն	Վերաապահովագրողների մասնաբաժնում փոփոխություն
-----------------------	-----------------------	---

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(5,948)	(130)	71	
Առողջության ապահովագրություն	(106,406)	585,178	0	
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	2,370	6,818	(1,457)	(8,037)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	3,941	(2,185)	2,204	177
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(20,781)	(3,861)	6,419	(8,732)
Ավտո պատասխանատվություն	(3,771)	(208)	168	(9)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(38,712)	(10,468)	(14,333)	12,342
Ֆինանսական վնասների ապահովագրություն	(1,824)	(106)	1,586	49
Աջակցության ապահովագրություն	306	(1,373)		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	(316,976)	(138,599)		
Ընդամենը	(487,801)	435,066	(5,342)	(4,210)

Ծանոթագրություն 8. Փոփոխություններ տեխնիկական պահուստներում

Ապահովագրության դասեր	Համախառն փոփոխություն		Վերաապահովագրողների մասնաբաժնի փոփոխություն	
	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(9,606)	(25,346)		
Առողջության ապահովագրություն	108,050	82,566		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(5,777)	6,625	(2,282)	(9,372)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	25,644	1,175	200	(23,617)
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	1,681	21,605		(756)
Ավտո պատասխանատվություն	(6)			
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	6,666	13,790	(2,218)	(15,279)
Ֆինանսական վնասների ապահովագրություն	34,235	(36,221)	(34,497)	34,496
Աջակցության ապահովագրություն	(2,110)	(4,443)		
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	6,994	102,881		
Ընդամենը	165,771	162,632	(38,797)	(14,528)

Ծանոթագրություն 9. Ներդրումային եկամուտ

Ներդրումային եկամտի աղբյուրը	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Բանկերում ներդրված ավանդների, նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով	306,408	282,884
ՀՀ ոչ պետական արժեթղթերից	35	869

Տրամադրված փոխառություններից	24,660	22,987
Այլ ներդրումներից	280	455
Ընդամենը	331,383	307,195

Ծանոթագրություն 10. Եկամուտներ միջնորդավճարներից

Ապահովագրության դաս	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	30	
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն		3,169
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	23,208	6,026
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	23,798	17,638
Ավտո պատասխանատվություն	149	226
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	3,904	4,303
Ֆինանսական վնասների ապահովագրություն	1,219	972
Ընդամենը	52,308	32,334

Ծանոթագրություն 11. Այլ գործառնական եկամուտ

Հաշվեգրած եկամտի տեսակ	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Սուբրոգացիայի կիրառումից եկամուտ	76,135	85,307
Այլ գործառնական եկամուտ	7,591	4,591
Դադարեցման հետևանքով ստացվելիք վերաապահովագրավճարներ	4,643	4,888
Ընդամենը	88,369	94,786

Ծանոթագրություն 12. Այլ եկամուտ

Հաշվեգրած եկամտի տեսակ	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Եկամուտներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից	11,885	445
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների իրացումից գուտ եկամուտ	106	
Ընդամենը	11,991	445

Ծանոթագրություն 13. Ջուտ հատուցումներ

Ապահովագրության դասեր, որոնց գծով վճարվել են հատուցումներ	Համախառն հատուցումներ		Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ	
	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(4,000)			
Առողջության ապահովագրություն	(511,771)	(1,212,822)		
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(164,686)	(167,531)	71,751	58,147
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(2,189)	(551,437)	154	53,0846
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(132,642)	(3,590)	113,861	349
Ավտո պատասխանատվություն	(91)			
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն		(23,338)		15,279
Ֆինանսական վնասների ապահովագրություն	(32,780)		40,668	
Աջակցության ապահովագրություն	(1,822)	(1,732)		

Յամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր	(1,033,097)	(1,201,793)		
Ընդամենը	(1,883,078)	(3,162,243)	226,434	604,621

Ծանոթագրություն 14. Չեռքերման ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	31.12.2015թ. դրությամբ	31.12.2014թ. դրությամբ
Առաջնային միջնորդավճար	(800,456)	(986,328)
Երկրորդային միջնորդավճար	(3,466)	(2,535)
Ընդամենը	(803,922)	(988,863)

Ծանոթագրություն 15. Այլ գործառնական և վարչական ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	31.12.2015թ. դրությամբ	31.12.2014թ. դրությամբ
Դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող ապահովագրավճարներ, ներառյալ հետ վերադարձվող ցեղենտի միջնորդավճարը	(130,280)	(265,975)
Վնասների կարգավորման և այլ ծախսեր	(40,132)	(32,016)
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ , արձակուրդային պահուստի ձևավորման ծախս	(427,789)	(460,446)
Մոցիայական ապահովագրության գծով ծախսեր		
Գործուղման ծախսեր	(2,337)	(1648)
<i>Ուսուցման ծախսեր</i>	(1,329)	(362)
Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	(136,212)	(126,217)
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	(3,218)	(2,680)
Առդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(49,700)	(16,700)
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(12,699)	(16,520)
Սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(3,409)	(5,094)
Շենքի վերանորոգում, սպասարկում	(821)	(356)
<i>Կապ և հեռահաղորդակցություն</i>	(23,762)	(23,583)
Գրասենյակային, տնտեսական,չիտխհատուցվող հարկեր, տուրքեր և այլն	(93,895)	(91,189)
Տոկոսային ծախսեր	(26,690)	(37,504)
Ընդամենը	(952,273)	(1,080,290)

Ծանոթագրություն 16. Այլ ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	31.12.2015թ. դրությամբ	31.12.2014թ. դրությամբ
Գովազդի գծով ծախսեր	(33,962)	(35,529)
Ներկայացուցչական ծախսեր	(6,843)	(5,681)
Անդամավճարներ, բարեգործություն	(60,130)	(77,063)
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվներ մաշվածություն	(76,516)	(74,277)
Տուգանքներ և այլ ծախսեր	(15,219)	(2,844)
Հիմնական միջոցների ,ոչ նյութական ակտիվների իրացումից զուտ ծախս, արժեզրկումից կարուստ		(500)
Ֆինանսական ակտիվների օտարումից զուտ ծախս	(2,554)	(1,197)
Ընդամենը	(195,224)	(197,091)

Ծանոթագրություն 17. Ծախսեր կապված շահութահարկի հետ.

Շահութահարկի գծով ծախսի /եկամտի/ խոշոր բաղադրիչներ	Ծախսի մեծությունը
--	-------------------

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Ընթացիկ հարկի գծով ծախս	(158,416)	(100,315)
Ընթացիկ հարկի գծով փոխհատուցում		25,677
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	3,170	1,427
Հետաձգված հարկի գծով ծախս	(3,243)	(710)
Ընդամենը	(158,489)	(73,921)

Ծանոթագրություն 18. Հետաձգված ձեռքբերման ծախսեր և ապագա ժամանակաշրջանի ծախսեր

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Հետաձգված ձեռքբերման ծախսեր գործող ապահովագրության պայմանագրերի գծով	368,497	246,480
Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ուժի մեջ մտնող ապահովագրության պայմանագրերի գծով միջնորդավճարների ծախսեր	67,984	30,642
Ընդամենը	436,481	277,122

Ծանոթագրություն 19. Հիմնական միջոցներ

	Ծեցքեր	Համակարգչա- յին և կապի միջոցներ	Փոխադրա- միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն.միջոց. գծով կապիտալ ներդր.	Վարձ.հիմն. միջոց.գծով կապիտալ ներդր.	Ընդամենը
--	--------	---------------------------------------	----------------------	-----------------------------	--	---	----------

Սկզբնական արժեք

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	398,172	114,050	144,543	142,333			799,098
Ավելացում		3,866		1,096			4,962
Օտարում							
Վերագնահատում*							
Արժեզրկում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	398,172	117,916	144,543	143,429			804,060
Ավելացում		4,502		702			5,204
Օտարում		(494)		(1,081)			(1,575)
Վերագնահատում*							
Արժեզրկում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	398,172	121,924	144,543	143,050			807,689

Կուտակված մաշվածություն

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	80,786	100,514	108,220	109,582			399,102
Ավելացում	4,984	2,550	597	6,236			14,367
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	85,770	103,064	108,817	115,818			413,469
Ավելացում	4,978	3,088	5,022	6,019			19,107
Օտարում		(494)		(1,081)			(1,575)
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ամանակաշրջանի վերջին	90,748	105,658	113,839	120,756			431,001

Չուս հաշվեկշռային արժեք

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	307,424	16,266	30,704	22,294			376,688
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	312,402	14,852	35,726	27,611			390,591

Ծանոթագրություն 20. Վաճառքի համար մատչելի հիմնական միջոցներ

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	234,000					234,000
Վերագնահատում*	-					-
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	234,000					234,000

Ծանոթագրություն 21. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալները.	Ընդամենը
--	-----------------------	--------------------------	-------------------------	---------------------------	---------------------------------------	----------

Մկզբնական արժեք

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	24,684			13,962		38,646
Ավելացում	(173)					(173)
Օտարում						
Արժեզրկում						
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	24,511			13,962		38,473
Ավելացում						
Օտարում				(5,682)		(5,682)
Վերագնահատում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ճգրտում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	24,511			8,280		32,791

Կուտակված մաշվածություն

Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	14,430			13,311		27,741
Ավելացում	749			194		943
Օտարում	(173)					(173)
Արժեզրկում						
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	15,006			13,505		28,511
Ավելացում	760			170		930
Օտարում				(5,682)		(5,682)
Վերագնահատում						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	15,766			7,993		23,759

Զուտ հաշվեկշռային արժեք

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	8,745			287		9,032
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	9,505			457		9,962

Ծանոթագրություն 22. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

	31.12.2015թ. դրությամբ	31.12.2014թ. դրությամբ
ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթերի անվանական արժեք	0	0

ՀՀ ոչ պետական տոկոսային արժեթղթի գծով տոկոսներ	0	0
Ընդամենը	0	0

Ծանոթագրություն 23. Դեբիտորական պարտքեր

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պարտքեր	42,558	120,291
Այլ պարտքեր	898	1,738
Հնարավոր կորուստների պահուստ	(10,234)	(43,794)
Ընդամենը	33,222	78,235

Ծանոթագրություն 24. Տրված կանխավճարներ

Ֆինանսական ակտիվի կատեգորիա	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Հատուցումների գծով	17,007	10,157
Գործակալներին տրված կանխավճարներ	42,302	38,230
Կանխավճարներ աշխատավարձի գծով	1,908	4,276
Այլ կանխավճարներ	32,725	31,533
Հնարավոր կորուստների պահուստ	(2,225)	(6,128)
Կանխավճարներ բյուջեին	2,394	24,846
Ընդամենը	94,111	102,914

Ծանոթագրություն 25. Պահանջներ բանկերի նկատմամբ

Ակտիվ	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ ավանդներ	2,642,832	1,491,141
Ավանդների գծով հաշվեգրված տոկոսների մնացորդ	87,482	71,310
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր	0	723,033
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով տոկոսներ	0	1,423
Հնարավոր կորուստների պահուստ	(27,303)	(22,869)
Բանկի արժեկտրոնային պարտատոմս	951	
Ընդամենը	2,703,962	2,264,038

Ծանոթագրություն 26. Տրամադրված փոխառություններ

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառություններ	296,500	318,801
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ	22,929	24,027
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ	171,000	10,605
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ ի գծով ստացվելիք տոկոսներ	181	314
Հնարավոր կորուստների պահուստ	(39,569)	(11,895)
Ընդամենը	451,041	341,852

Ծանոթագրություն 27. Վերաապահովագրական ակտիվներ

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
ՉԱՊ	112,175	117,518
ՆՉՊՊ	7,197	45,994
Վերաապահովագրողից ստացվելիք միջնորդավճար	21,572	7,989
Վերաապահովագրողից ստացվելիք հատուցումներ	35,462	23,927
Դադարեցված պայմանագրերի գծով և վերաապահովագրողներից ստացվելիք այլ գումարներ	705	63,274
Հնարավոր կորուստների պահուստ	(1,772)	(2,587)
Ընդամենը	175,339	256,115

Ծանոթագրություն 28. Հետաձգված հարկային ակտիվ

Ընկերությունը հաշվեկշռում ճանաչել է **8,693 հազար դրամ** հետաձգված հարկային ակտիվ, որն առաջացել է աշխատակիցների հատուցումների գծով ձևավորված պարտավորությունների, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային և հարկային բազայի տարբերությունից:

Ծանոթագրություն 29. Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Ապահովադիրներից ստացվելիք ապահովագրաճարներ	692,717	691,242
Ապահովադիրներից ստացվելիք այլ գումարներ	479	757
Ապահովագրական գործակալներից ստացվելիք ապահովագրաճարներ	442,887	361,473
Ապահովագրական գործակալներից ստացվելիք այլ գումարներ		1,295
Ապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարներ	853	873
Այլ անձանցից ստացվելիք գումարներ	422	4,349
Հնարավոր կորուստների պահուստ	(129,897)	(65,466)
Ընդամենը	1,007,461	994,523

Ծանոթագրություն 30. Դրամական միջոցներ և համարժեքներ

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Կանխիկ դրամ դրամարկղում	5,400	5,645
Կանխիկ դրամ ճանապարհին	49	
Բանկային հաշիվներ բանկերում	92,407	44,531
Ընդամենը դրամական միջոցներ	97,856	50,176
Հնարավոր կորուստների պահուստ	(923)	(445)
Ընդամենը	96,933	49,731

Ծանոթագրություն 31. Այլ ակտիվներ

	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Խիստ հաշվառման բլանկներ,	301	387
վառելիք,	790	665
պաշարներ	111	1,000
Ընդամենը	1,202	2,052

Ծանոթագրություն 32. Չվաստակած ապահովագրավճարի պահուստ

Ապահովագրության դաս	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	29,990	24,042
Առողջության ապահովագրություն	393,345	286,939
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	169,164	171,534
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	9,977	13,918
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	153,408	132,627
Ավտո պատասխանատվություն	5,892	2,121
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	71,501	32,789
Ֆինանսական վնասների ապահովագրություն	3,657	1,833
Աջակցության ապահովագրություն	7,800	8,106
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1,030,970	713,994
Ընդամենը	1,875,705	1,387,904

Ծանոթագրություն 33. Պահանջների պահուստ

Ապահովագրության դաս	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
---------------------	--------------------------	--------------------------

Դժբախտ պատահարներից ապահովագրություն	3,283	6,331
Առողջության ապահովագրություն	95,779	203,829
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	23,111	41,384
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	383	29,761
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	12,621	2,345
Ավտո պատասխանատվություն	6	
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	10,051	23,311
Ֆինանսական վնասների ապահովագրություն	1,639	36,221
Աջակցության ապահովագրություն	6,976	4,867
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	200,913	207,907
Ընդամենը	354,762	555,956

Ծանոթագրություն 34. Այլ ապահովագրական պահուստներ

Ապահովագրության դաս	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	111,548	98,894
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	46,410	
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	3,734	22,359
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն		11,957
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	23,267	16,673
Ֆինանսական վնասների ապահովագրություն	347	
Աջակցության ապահովագրություն		
Ընդամենը	185,306	149,883

Ծանոթագրություն 35. Ապահովագրական պայմանագրերի գծով պարտավորություններ

Պարտավորության աղբյուր	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Հատուցումների գծով վճարվելիք գումարներ	37,651	17,553
Միջնորդներին վճարվելիք գումարներ	87,512	49,056
Ռեզիդենտ ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ	10,115	115,646
Ընդամենը	135,278	182,255

Ծանոթագրություն 36. Կրեդիտորական պարտավորություններ վերաապահովագրության գծով

Պարտավորություն ըստ դասերի	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	74	
Ցամաքային տրանսպորտ	32,055	34,617
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	31,267	31,900
Ավտոմեք. պատասխանատվություն	363	321
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	23,527	12,570
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	7,434	3,823
Ֆինանսական վնասների ապահովագրություն		
Միջնորդներին վճարվելիք գումարներ	468	114
Ընդամենը	95,188	83,345

Ծանոթագրություն 37. Ապահովագրության գծով ստացված գումարներ

Պարտավորության աղբյուր	31.12.2015թ դրությամբ	31.12.2014թ դրությամբ
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ կնքված ապահովագրության պայմանագրերի գծով	256,975	267,979
Ապահովագրության գծով գործակալներից ստացված կանխավճարներ	1,034	724
Ընդամենը	258,009	268,703

Ծանոթագրություն 38. Այլ պարտավորություններ

Պարտավորության աղբյուր	31.12.2015թ	31.12.2014թ
------------------------	-------------	-------------

	դրությամբ	դրությամբ
Աշխատավարձ, հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	42,814	32,130
Պարտավորություններ բյուջեի նկատմամբ	115,262	13,094
Ապահովագրողների բյուրոյի նկատմամբ	25,189	9,098
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների և ապրանքների դիմաց	20,768	20,018
Ստացված կանխավճարներ և այլ պարտավորություններ	27,857	22,610
Տրամադրված երաշխավորությունների և երաշխիքների գծով ընթացիկ պահուստներ	23,810	14,870
Ընդամենը	255,700	111,820

Ծանոթագրություն 39. Ներգրավված վարկեր

	31.12.2015թ. դրությամբ	31.12.2014թ. դրությամբ
Ռեզիդենտ Բանկերից ստացված ընթացիկ վարկերի մնացորդ	200,000	200,000
Ռեզիդենտ Բանկերից ստացված ընթացիկ վարկերի գծով տոկոսների մնացորդ	3,682	2,992
Ընդամենը	203,682	202,992

Ծանոթագրություն 40. Կապիտալ

31.12.2015թ.-ի դրությամբ Ընկերության հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալը կազմում է **1 290 000 հազար ՀՀ դրամ**:

Գործադիր տնօրեն

Հովհաննես Գևորգյան

Գլխավոր հաշվապահ՝

Նադեժդա Գասպարյան